

# ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՆԴԵՍ

Մայիսի 28-ին հայկական պետականության վերականգնման 75-րդ տարեդարձի առթիվ Հանրապետության հրապարակում տեղի ունեցավ Հայաստանի զինված ուժերի զորահանդես, որն ընդունեց ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանը: Դիմելով հավաքվածներին, պաշտպանության նախարարն ասաց, թե 75 տարի առաջ, հարյուրամյակների ընդմիջումից հետո, 1918 թվականի մայիսի 28-ին մեր ժողովրդին բախտ վիճակվեց վերականգնել ազգային պետականությունը և ստեղծել անկախ պետություն: Նախարարի ասելով, 1918 թվականին մեր անկախության վերականգնումը պայմանավորված էր Սարդարապատի հաղթանակով, անկախության կորուստը 1920 թվականին՝ ռազմական պարտությամբ:

«Այժմ նույնն է պատկերը. մեր պետության գոյությունը, ներքին կյանքը, պետականության կառուցումը, մեր ժողովրդի ազատությունը և ապագան բանակի ձեռքում է, կախված է նրա հաղթանակներից և պարտություններից: Եվ մեր ժողովուրդը, նորածին պետությունը ստեղծեցին հաղթանակող բանակ, որը մարտնչում է արդարության, ազատության, մեր ազգային խնդիրների իրականացման համար», ասաց Վազգեն Մանուկյանը: Պաշտպանության նախարարի ասելով, այն, որ մենք հնարավորություն ունենք խաղաղ պայմաններում հպարտությամբ նշել մեր անկախ պետականության վերականգնման տարեդարձը, պարտական ենք այն հերոսներին, որոնք իրենց կյանքը զոհաբերեցին ռազմաճակատներում, հանուն մեր ժողովրդի գոյության ու մեր ազգի հզորացման: Պաշտպանության նախարարը հայտարարեց նաև, որ այժմ մենք ունենք հզոր բանակ, համալրված լավագույն սպաներով, խիզախ զինվորներով, և այդ բանակը ի վիճակի է հաջողությամբ լուծել բոլոր այն խնդիրները, որոնք նրա առջև կդնի մեր ժողովուրդը, մեր պետությունը:

Զորահանդեսի հրամանատար, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ գեներալ լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի զեկույցից հետո սկսվեց հանդիսավոր շքերթը, որին մասնակցեցին Հայաստանի զինված ուժերի տարբեր զորամիավորումներ: Հանրապետության հրապարակով անցավ նաև ռազմական տեխնիկա: Զորահանդեսին ներկա էին նաև հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը, կառավարության անդամներ, հյուրեր և տասնյակ հազարավոր երևանցիներ: Տարիների ընդմիջումից հետո հայ ժողովուրդը թեև առաջին անգամ ականատես եղավ իր սեփական բանակի կազմակերպված ու ոգեշունչ երթին: Զորահանդեսից հետո Հայաստանի ղեկավարությունը մասնակցեց համաժողովրդական զբոսանքին:

Ա. Հ.